ԹԵՄԱ 1 ԵՎՐՈՊԱ

ԴԱՍ 1.9. Հարավային Եվրոպա: Բնական պայմանները և ռեսուրսները, բնակչությունը

• • •

Տարածքով և բնակչության թվով աշխարհի ամենափոքր պետություն Վատիկանը համաշխարհային հռչակ ու ազդեցություն ունեցող պետություն է՝ ֆինանսական շատ մեծ կարողություններով: Այն խոշոր կապիտալ ներդրումներ ունի արտասահմանյան շատ երկրներում, այդ թվում՝ Իտալիայում, Շվեյցարիայում, ԱՄՆ-ում: Այստեղ են գտնվում Սուրբ Պետրոսի՝ աշխարհի խոշորագույն կաթոլիկական տաճարը և Վատիկանի հռչակավոր թանգարաններն ու պատկերասրահները: Վատիկանն աշխարհի ամենատարբեր երկրներում 50 լեզուներով հրատարակում է ավելի քան 1500 թերթ ու ամսագիր: Նրան է պատկանում աշխարհի ամենահզոր ռադիոկայաններից մեկը:

• • •

Տարածաշրջանի ընդերքը, բացառությամբ Իսպանիայի, հարուստ չէ *օգտակար հանածոներով*: Մեծ են անագի, վոլֆրամի, ուրանի, երկաթի, ծծմբի, քրոմիտների, տարբեր շինանյութերի արդյունաբերական նշանակության պաշարները (հիմնականում Իսպանիայում): Գունավոր մետաղներով առանձնանում են բալկանյան երկրները, ծծումբով, մարմարով, շինանյութերով՝ Իտալիան:

Հարավային Եվրոպայի երկրներն աղքատ են *անտառային ռեսուրսներով*, ինչը տարածքի վաղ բնակեցման և մարդու կողմից բազմադարյա յուրացման արդյունք է: Անտառներն հիմնականում պահպանվել են լեռնային շրջաններում: *Բնակլիմայական պայմաններն ընդհանուր առմամբ բարենպաստ են գյուղատնտեսության, հատկապես՝ մերձարևադարձային բուսաբուծության զարգացման համար*: Ձմեռները մեղմ են և խոնավ (միջին հունվարյանը +10+12^{0}C), ամառները՝ շոգ (միջին հուլիսյանը՝ +24 +25^{0}C) և չորային (փորձեք հիշել կլիմայի տիպը):

• • •

Միջերկրականի ավազանը, լինելով քաղաքակրթության հնագույն օջախներից մեկը, բավական խիտ է բնակեցված: Նրա բնությունը հնուց ի վեր մեծապես ենթարկվել է մարդու ակտիվ ներգործությանը և այժմ պահպանման կարիք ունի: Մեծ վնաս են հասցնում անտառային հրդեհները և Միջերկրական ծովի աղտոտումը զանազան թափոններով:

• • •

Բնակչության կենսամակարդակը Հյուսիսային և Արևմտյան Եվրոպայի համեմատ ցածր է: Տարածաշրջանում բավականին ինտենսիվ են միգրացիոն գործընթացները: Բնակչության արտագաղթին նպաստել են Հարավսլավիայի փլուզման հետևանքով առաջացած ազգամիջյան արյունալի բախումները: Միլիոնավոր իսպանացիներ, պորտուգալացիներ, իտալացիներ, հույներ մշտապես ապրում են Գերմանիայում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում և Եվրոպայի այլ երկրներում: Միաժամանակ, Հյուսիսային Աֆրիկայի երկրներից զգալի միգրանտներ են թափանցում տարածաշրջան՝ (մասնավորապես՝ Իտալիա) ազդելով բնակչության ազգային ու կրոնական կազմի վրա:

• • •

Գաճաճ-պետությունները մշտական բանակ չեն պահում, կամ ունեցածն էլ բաղկացած է մի քանի տասնյակ մարդուց: Այդ պետությունները չունեն սեփական կալանավայր, կամ եթե այդպիսին կա, ապա սովորաբար դատարկ է:

• • •

Հարավային Եվրոպայի երկրներում հանգստի և զբոսաշրջության ռեսուրսները բացառիկ հարուստ են: Դրանք աղի և տաք ծովերն են, հազարավոր կիլոմետրերով ձգվող ավազոտ լողափերը (Իտալական Ռիվիերա), բնական գեղատեսիլ լանդշաֆտները, հանքային ջրերը, ծովային և լեռնային բազմաթիվ առողջարանները, ալպինիզմի (լեռնագնացություն) և լեռնադահուկային մարզաձևի երթուղիները:

• • •

Բնակչության թվաքանակը մինչև 35 հզ. է, Վատիկան՝ 800 մարդ, Մոնակո՝ 35 հզ.: Այս երկրները Անդորրայի, Սան Մարինոյի և Մալթայի հետ միասին

կոչվում են նաև «գաճաճ պետություններ»: Բացառիկ է Ջիբրալթար քաղաքի կարգավիճակը: Այն գտնվում է Իսպանիայի ծայր հարավում և պատկանում է Մեծ Բրիտանիային՝ ծառայելով որպես ռազմածովային հենակետ:

• • •

Աճում է նաև արտագաղթը: Բացառությամբ Իսպանիայի, մյուս երկրներում բնակչության *ազգային կազմը հիմնականում միաբարբ է*: Բնակչության ճնշող մեծամասնությունը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի ռոմանական, մի մասը՝ սլավոնական, իսկ Մալթայի բնակչությունը՝ սեմական լեզվախմբին: Հատուկ լեզվախումբ են հունարենը (խոսում են Հունաստանում) և ալբաներենը (Ալբանիա, Կոսովո):